

Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 29-ի նիստի

Մասնակցում էին՝ հանձնաժողովի 29 անդամներից 27-ը

Բացակայում էին՝ ՀՀ ԳԱԱ-ի տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վ. Հարությունյանը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Գ.Գևորգյանը

Հրավիրված էին՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ Գ.Հայրապետյանը, Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի ներկայացուցիչ, մարդահամարի հարցերը համակարգող Ա. Հովհաննիսյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչությունից Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում (ՀՀ ԱՎԾ),
2. ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նախագծի քննարկում և հավանության արժանացում,
3. Այլ հարցեր:

Բացման խոսքով հանդես եկավ նիստը նախագահող՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ **պրն. Ա. Գևորգյանը:** Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին և առաջարկեց ձևավորել օրակարգը՝ հիմք ընդունելով ներկայացված օրակարգի նախագիծը: Այլ առաջարկություններ չեղան և հաստատվեց օրակարգի ներկայացված նախագիծը: Օրակարգի առաջին հարցը ներկայացնելու համար նա խոսքը տվեց հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Կոյունջյանին:

Կ.Կոյունջյանը - ներկայացրեց ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառույթների կանոնակարգման և իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման և տպագրման, սխեմատիկ հատակագծերի պատրաստվածության, բազմամակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ՝ «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթերի տրամադրման և դրանց լրացման գործընթացը վերաբերյալ: Ներկայացվեց նաև մարդահամարի նախապատրաստական աշխատանքների իրականացման շրջանակում առաջացած որոշ հիմնախնդիրներ, որոնց կապակցությամբ ակնկալվում են համապատասխան պտական մարմինների և 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների աջակցությունը (զեկույցի համակարգչային ներկայացմամբ համառոտագիրը՝ 8 պատկեր, կցվում են):

Ա. Գևորգյանը - ներկայացված հիմնախնդիրների լուծումներին նպաստող առաջարկությունների կապակցությամբ հարցեր ուղղեց համապատասխան ոլորտները ներկայացնող հանձնաժողովի անդամներին, որոնց առնչվում էին դրանց լուծումները: Մասնավորապես, հարցադրումը վերաբերվում էր հանրապետությունում «Քաղաքների սահմանների ճշգրտման, փողոցների անվանումների, թաղամասերի և տների համարակալման կարգավորման, հասցեային տնտեսության կարգավորման ուղղությամբ գործառույթների իրականացմանը: Առաջարկեց «Ոստիկանության ներկայացուցչին տեղեկատվություն ներկայացնել հասցեային տնտեսության կարգավորման ուղղությամբ կատարված աշխատանքների ընթացքի մասին:

Ն. Մուրադխանյանը - «Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պետը տեղեկացրեց, որ համապետական հանձնաժողովի նախորդ նիստի ժամանակ քննարկված այս հիմնախնդրի լուծման ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են, և նախատեսում են ավարտել մինչև ս. թ. հունիսի 1-ը: Ընդ որում, «Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության տվյալներով՝ 2010թ. դեկտեմբերի 24-ից մինչև 2011թ. ապրիլի 24-ը ճշգրտվել են թվով 12118 հասցե:

Ա. Գևորգյանը - մեկ անգամ ևս ընդգծեց, որ գործընթացը կշարունակվի մինչև **ս.թ. հունիսի 1-ը**, որպեսզի մարդահամարի նախաշեմին, հնարավորինս, մեծ փոփոխությունների առիթներ չլինեն:

Կ. Կույումջյանը - «ԱՎԾ կողմից ներկայացված աշխատանքների շարքում առանձնացրեց «Քաղաքային համայնքների և խոշոր գյուղերի սխեմատիկ հատակագծերի պատրաստվածության վիճակը, որոնց ոչ ամբողջական պատրաստվածությունը պայմանավորված էր նախատեսված համապատասխան ֆինանսական միջոցների բացակայությամբ:

Ա. Գևորգյանը - հանձնարարեց «Ֆինանսների փոխնախարար, «Ղխավոր գանձապետ, հանձնաժողովի անդամ՝ պրն. Ա. Զանջուղազյանին կանոնակարգել «պետական բյուջեից մարդահամարի նախապատրաստման և անցկացման համար հատկացվելիք 100 մլն. դրամի տրամադրման գործընթացը, քանզի հրատապ լուծում պահանջվող հարցեր կան: Ընդ որում, «Վարչապետ՝ պարոն Տ. Սարգսյանի հետ այդ հարցն արդեն իսկ համաձայնեցված է: «ԱՎԾ-ին **առաջարկեց** պատրաստել այս կապակցությամբ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և ներկայացնել նախարարական կոմիտեի առաջիկա՝ 05.05.2011թ. նիստի քննարկմանը, որպեսզի ներառվի «Կառավարության մայիսի 12-ի նիստի օրակարգում:

Որոշվեց - **1. Ընդունել ի գիտություն** «Ո 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ «Ազգային վիճակագրական ծառայության հաղորդումը (որոշում N 2):

Կ. Կույումջյանը - ներկայացրեց օրակարգով, նախատեսված երկրորդ հարցը՝ «Ո 2011թ. մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նախագծի վերաբերյալ: Այն կազմվել էր ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի ռաուներում մարդահամարի և կացարանների հաշվառման Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականների համաձայն, ներկայացվել էր շահագրգիռ պետական մարմիններին և ոչ կառավարական հաստատություններին և ստացվել նրանց դիտողություններն ու առաջարկությունները, փորձարկվել 2010թ. հոկտեմբերին անցկացված փորձնական մարդահամարի ընթացքում, ինչպես նաև նախապես (18.04.2011թ.) ներկայացվել էր «Ո 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի բոլոր անդամներին: Նա ներկայացրեց համապետական հանձնաժողովի անդամների կողմից կատարված առաջարկությունները և դիտողությունները, հարցաշարում դրանց ընդգրկելու

նպատակահարմարությունը՝ ՀՀ ԱՎԾ դիրքորոշումը նկարագրող «Ամփոփաթերթ» փաստաթղթի համաձայն:

Հարցաշարի առնչությամբ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, ինչպես նաև առաջարկված նոր հարցեր ընդգրկելու կամ չընդգրկելու պարզաբանումների ներկայացումից հետո, հանձնաժողովի նախագահը նշեց.

Ա. Գևորգյանը- Ես հակված եմ այն տեսակետին, որ հարցաշարը լինի հնարավորինս պարզ, ընդգրկի այնպիսի հարցեր, որոնք հարցվողների համար դժվարություններ չստեղծեն և/ կամ դժգոհություն չառաջացնեն: Միաժամանակ նա նշեց, որ մարդահամարի արդյունքներով ստացված տվյալները հարուստ են այնքանով, որ գուցե և բավարարեն ստանալու այն տվյալները, որ ակնկալվում է, օր. ՀՀ միգրացիոն պետական գործակալության կողմից առաջարկվող հետազոտության արդյունքներով, որպեսզի հետո լրացուցիչ ֆինանսական միջոցներ չծախսվեն նոր դիտարկում իրականացնելու համար: Ինչ վերաբերվում է մարդահամարի արդյունքով ձևավորված տեղեկատվական բազայի օգտագործմանը թվային քարտեզների տեսքով, ապա դա այլ հարց է և կքննարկվի մարդահամարիավարտից հետո, միևնույն է խոսքը վերաբերվելու է ամփոփված և խմբավորված տվյալներին:

Գ. Հայրապետյան - ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալն առաջարկեց մարդահամարի հարցաշարում ընդգրկել մայրական մահացության վերաբերյալ հարցը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հազարամյակի զարգացման նպատակների շարքում կարևորվող ցուցանիշներից է և ՄԱԿ-ը կարևորում է այդ ցուցանիշի վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացումը:

Ա. Գևորգյանը - Հարցաշարում նպատակահարմար է ընդգրկել այնպիսի հարցեր, որոնք պետք է առնչվեն բնակչության մեծամասնությանը, իսկ մայրական մահացության վերաբերյալ հարցն ինքնին շատ զգայուն է, առնչվում է նվազագույն թվով տնային տնտեսությունների, առկա են դրա ստացման այլ աղբյուրներ, այդ իսկ նկատառումով այդ հարցի ընդգրկումը հարցաշարում նպատակահարմար չէ: Նա նշեց նաև, որ հարցաշարի քննարկումներն այսքանով չեն սահմանափակվում, քանզի «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, այն պետք է հաստատվի ՀՀ կառավարության որոշմամբ, այսինքն դեռ պետք է ներկայացվի և քննարկվի ՀՀ կառավարությունում:

Որոշվեց - 2. **Հավանություն տալ** Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նախագծին(որոշում N 3):

Ա. Գևորգյանը - նախարարական կոմիտեի առաջիկա նիստի քննարկմանը ներկայացնելու համար ՀՀ ԱՎԾ-ին առաջարկվեց պատրաստել այս կապակցությամբ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և նախաձեռնել ՀՀ 2011թ. Մարդահամարի ծրագիրը (հարցաշարը) ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու գործընթացը:

Ա. Գևորգյանը - օրակարգի այլ հարցեր խորագրի ներքո՝ հանձնաժողովի անդամներին տեղեկատվություն հաղորդեց մարդահամարի աշխատանքների ֆինանսական միջոցների հայթայթման ուղղությամբ կատարվող ջանքերի վերաբերյալ: Նա տեղեկացրեց, որ ՀՀ Նախագահի հետ իր աշխատանքային քննարկման ժամանակ Ա. Գևորգյանն անրադարձել է ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստմանն ու անցկացմանն առնչվող հարցերին և երկրի Նախագահին տեղեկացրել դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բացակայության վերաբերյալ: Նախագահը նշել է, որ այսօր մեր երկրի համար մարդահամարի անցկացումը շատ կարևոր հարց է և հանձնարականներ է տվել՝ ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ արտաքին գործերի նախարարներին, որպեսզի միջազգային կազմակերպությունների հետ իրենց կառույցների ներկայացուցչական հանդիպումների ժամանակ օրակարգային

դարձնեն մարդահամարի անցկացման համար ֆինանսական միջոցների հնարավոր հայթայթման հարցը:

Ա. Հովհաննիսյան - Համաշխարհային բանկի ներկայացուցիչը նշեց, որ արդեն ավարտին է մոտենում Համաշխարհային բանկի «Տրաստ» ֆոնդի ձևավորման հարցը, որը հնարավորություն կտա միջազգային դոնոր կազմակերպություններին մարդահամարի անցկացման համար ֆինանսական միջոցներն ուղղել հենց դեպի այդ ֆոնդ, դյուրացնելով դրամական միջոցների օգտագործման որոշ ընթացակարգեր: Դանիայի կառավարությունն է հետաքրքրություն ցուցաբերել ՀՀ 2011թ. Մարդահամարին աջակցելու հարցում: Մայիսին նախատեսվում է հրավիրել Դոնոր հանրության հերթական հանդիպում քննարկելու իրավիճակն ու սպասվող քայլերը:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ

Ա. Գևորգյանը – նա շնորհակալություն հայտնեց միջազգային կառույցներին, ովքեր աջակցում են ՀՀ 2011թ. մարդահամարի կայացմանը:

Առաջարկեց ՀՀ ԱՎԾ-ին մարզպետների հետ իր առաջիկա հանդիպմանը ներկայացնել մարզերի և Երևան քաղաքի հետ առնչվող խնդիրները և հարցերի լուծումները միանգամից տեղափոխել գործնական դաշտ: Միաժամանակ, առաջարկեց բոլոր գերատեսչությունների այն ներկայացուցիչներին, որոնց գործառույթներն առընչվում են մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների հետ, հնարավորինս ինտենսիվ աջակցություն ցուցաբերել: Իր կողմից հավաստիացրեց, որ մարդահամարի նախապատրաստմանն ու անցկացման հարցերը կան և կլինեն իր ուշադրության կենտրոնում:

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ փոխվարչապետ,

ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության

աշխատակազմի մարդահամարի և

ժողովրդագրության բաժնի պետ

Կ. Կույումջյան